

ՀԵՉԱԿ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ ԸՆԴԴԻՄ ՃՆՇՎԱԾՆԵՐԻ

Ամօթ, ամօթ, ամօթ... Հեգնում, ծաղրում են ճնշվածներին. ձեռնածուլթիւն, մասխարութիւն են անում նրանց անլուր տանջանքների դէմ. վայրենիներին թողնում են խողովողէ ծեր, կին, երեխայ. ճնշվածներին ստիպում են թափել տալ իրանց արիւնը, խեղդվել, պատառապատառ լինել... մինչդեռ իրանք... Մոլոր համաձայնութիւն, սոլոր դաշնակցութիւն... անպաշտպան զոհերին յանձնելու համար Վահճին:

Համաձայնութիւն... Ի՞նչ նպատակով: Արդեօք այն հրէշի՞ դէմ, որ հեքիաթի դէի նման իւրաքանչիւր օր պահանջում է արիւն ու զոհութիւն...

Այդպէս են նրանք ձեռացնում աշխարհի առջև և սակայն մինչև այժմ իրողութիւններն այդ չեն հաստատում...

Այդ համաձայնութիւնը Արէտէի ազատման առաջ արգելքներ հանելու համար է կազմված:

Այդ համաձայնութիւնը փոքրիկ հայ ժողովրդին բնաջինջ անելու վայրենութեանն օգնութեան է հասնում:

Այդ համաձայնութիւնը մի շարք թշուառ ժողովրդներին ստրկացնող ու քայքայող բռնապետին, նրանց մորթող Մեծ Մարդասպանին, Մեծ Վահճին պահպանելու համար է կազմված:

Եւ այդպէս անողն Անգլիան է, որ պարծենում է իր ազատամտութեամբ. Գրանսիան է, այդ խորթ ժառանգորդը Գրանսիական Մեծ Յեղափոխութեան, մարդկային ու քաղաքացիական իրաւունքների հռչակողի:

Աւստրիա, այդ կաղարմային ու ոստիկանական տէրութիւնը, դեռ չէ ամաչում Բօսնիայից ու Հերցոգովինիայից և շարունակ փնտռում է համեղ կտորներ թիւրքիայից: Վերմանիա, այդ վարագոյրի ետևն ինարիդներ անողը, դեռ հըռ ծառայողն է բխմարկեան սևախորհուրդ աւանդութիւնների: Դաւալիան մոռացաւ արդեօք իր Վարիբալդիին: Ուսաց բռնապետութիւնն, այդ հռչակաւոր թշնամին ժողովրդների ազատութեան, միշտ հսկող համեղ պատառի, միշտ գաղտնի պաշտպան ու զրդիչ Մեծ Մարդասպանի, միշտ կա-

տարեալ մարմնացումն խարաղանի, դաւաղանի, ուրոնցով թէ իր ձեռքով և թէ ուրիշ տէրութիւնների ձեռքով նա հարուածում է մարդկութեան մէջ ամեն նորը, ամեն թարմը, ամեն ազատ ձգտում, և ինքը տարածված ծայրագոյն Աւելելքից մինչև Աւրօպայի սիրան, ուր խեղդում է Ահաստանին, և Գինլանդիայի սառնամանիքներից մինչև Արարատեան ջերմաշունչ հարաւը, իր երկաթէ վահանով ճնշում է ամենքին ու ամեն բան... Եւ ինտրիգներ է անում Վերմանիայում, ստրկացնում ու ծառայեցնում է իր շահերին հանրապետական Գրանսիային, զգուշանում է Անգլիայից, արհամարհում Դաւալիային, միմոսութիւններ անում Աւստրիայի առջև և դաւեր անելով՝ դրդում, զրգում Մեծ Մարդասպանին նրա հըպատակ ժողովրդների դէմ... Եւ աջողութեամբ օգտվում է հայկական արհաւիրքներից, պարարտացնում իր քսակը Ֆրանսիական ժողովրդի միլիարդներով, համբուրվում Վերմանիայում... և ամեն բան ու ամենքին իր քաղաքականութեան շուրջը պտտեցնում, իր բերանից ընկած խօսքերն օգտւում բռնել տալիս, և ապա իր մէկ ակնթարթով կործանել տալիս աշխարհիս Մեծերի ամբողջ պլաններ, ամբողջ նախագծեր...

Եւ այդ մեծ դերակատարի շուրջը խռնված են միւս մեծ տէրութիւնները, կազմած են «համաձայնութիւն»:

Մոլոր համաձայնութիւն ընդդէմ ճնշված ժողովրդների, որոնք ձգտում են ազատվել ըստրկութիւնից:

Ի՞նչ. իրանց այդ ձգտումով այդ ճնշվածները միթէ այնքան զօրաւոր են յայտնվում՝ իրանց թշուառ մերկութեան մէջ և այնքան սպառնական՝ իրանց ճորտութեան ու արեան մէջ, որ աշխարհիս կայսրներն ու տէրութիւններն անգսպելի իրարանցման և անելանելի դրութեան մէջ են ընկել... Եւ այդ պատճառով կրսկսե՞ն արդեօք այդ Մեծերն իրանց թնդանօթների բաց բերանն ուղղել մի Յունաստանի դէմ և յանուն իրանց եսամոլութեան ու շահերի լղել Մեծ Վահճապետի ոճրադործ ձեռքերը...

Փահ, մի փոքրիկ Յունաստան, որն այնքան «աննշան» է մեծ պետութիւնների դիմաց, յանկարծ համարձակութիւն ունեցաւ հետեւելու իր

պատմական հրաշալի աւանդութիւններին, համարձակութիւն ունեցաւ իր սրբազան պարտականութիւնը և իր ազգային մեծ կոչումը համարելով՝ քոյր Արէտէի ազատման գործը... Եւ նա՝ այդ կատարում է, բոլորովին ի դերը՝ հանելով մեծ տէրութիւնների ամեն ներքին նախագծեր... Ինչ յանդգնութիւն, այնպէս չէ՝ Արին կուզես, որ դա չը կատարեցնէ:

Տեսէք գերմանական ազմկայոյղ կայսրին: Վրա մէջ՝ բիսմարկեան արիւնը խօսեց. նա ջանք է տնում հռչակաւոր Վահագնապետի նկատմամբ ուսասաց կառավարութեան մինչև օրս խորամանկաբար ձեռք բերած գերիշխանութիւնից իր մեծ բաժինն ունենալ, ինքը թելադրել Եւրոպային ամեն ընթացք, ինքը պաշտպանել ամենասիրելի Մարդասպանին, զարդարել իր պղնձէ ծախատը թիւրքական դափնիներով: Եւ տեսէք թէ ներկայ՝ քաղաքակիրթ կոչված՝ տասնիկներորդ դարու վերջերն ինչպիսի ցինիկական լեզու է դործածում նա՝ արժանի բռնապետութեան ամենավայրենի րօպէներին: Այդ փրփրող միապետն ազադակում է, թէ «Յունաստանին պէտք է հրամայել և ոչ թէ բանակցել նրա հետ»...

Բայց որքո՞ն դաւաճանութիւն դրանց այդ սուրբ համաձայնութեան մէջ:

Ուսաստանը, որ պատերազմական մեծամեծ պատրաստութիւններ է տեսնում, կարծես թէ տրամադիր յարմար րօպէին խուժելու թիւրքիայի վրայ, արդարև թւում է, որ բոլորովին դժգոհ չը պիտի լինի ներկայ յունական շարժումներից: Արդեօք դա նախերգանքը չէ՞ Բալկանեան թերակղզիի մէջ կատարվելիք մէկ ընդհանուր շարժման: Յունաստանի ներկայ շարժումն արդեօք չ'ը պիտի ծառայէ Ուսաստանին մի փորձաքարի տեղ՝ գուշակելու համար եւրոպական միւս պետութիւնների ընթացքն ու դիրքը, եթէ թիւրքիայի դէմ յարձակողական գործողութիւն լինի որ և է տէրութեան կողմից: Պէտք չէ զարմանալ, եթէ հէնց այն ժամանակ, երբ մեծ տէրութիւնները «համաձայնութիւն» են կայացնում «թիւրքիայի ամբողջութիւնը» պահպանելու նպատակով, յանկարծ երևան գայ, որ «համաձայնողներից» մէկը կամ միւսը հսկում է միայն մի յարմար վայրկեան իր սրտաշարժ «համաձայնութիւնը» խախտելու: Վրանք ամենքն արդէն սովոր են միշտ միմեանց դաւաճանելու: Հէնց այն րօպէին, երբ ամենքը միաբերան ու ոգևորված պոռում են թիւրքիայի «ամբողջութեան պահպանման» մասին, հէնց այդ րօպէին է, իսկապէս, որ այդ ամբողջութիւնը գտնվում է ամենամեծ վտանգի տակ:

Եւ այդ փառքն ընկնում է Յունաստանի բաժնին: Վա է, որ այդպիսով լուծել է տալիս Ա-

րևելեան խնդիրը: Վա է, որ այդպիսով ստիպեց եւրոպական պետութիւններին դադարել իրանց մարդասպան կատակախաղը. նրանք, վախեցած իրանց շահերի համար, վերջապէս զրաւեցին մի թիւրքական հող, վերջ տալով իրանց նուատորմային նազանքներին: Այդ հողը Արէտէն եղաւ: Եւ եթէ Յունաստանը չը կարողանայ իսկ իրան միացնել իր քոյր կղզիին, այդու ամենայնիւ այսօրւանից իսկ մի փաստ է, որ Արէտէն այլ ևս դադարեցաւ թիւրքական հող լինելուց:

Այն վեհ, այն առաքինի, այն մեծ ու անվեհեր քայլը, որ առաւ Յունաստանը, իսկապէս խախտում է այլ տեսակի «համաձայնութիւններ», որոնցով դեռ երկար ժամանակ պէտք է քնացընէին աշխարհին եւրոպական տէրութիւնները: Եւ այդ գեղեցիկ շարժումը գործն է յոյն ժողովրդի: Վրանն է զրա նախաձեռնութիւնը, նա է զրա հեղինակը, նա է զրա մղողը: Եւ երկիւղ կրելով կորցնել իր թագաւորական դահլ, յունաց թագաւորը ստիպվեց զննանել հերոսական յոյն ժողովրդի ողբորութեանը, ցաւման ու պահանջին՝ օգնելու իրանց եղբայր Արէտացիներին ազատվելու սուլթանական լծից: Վա ստիպվեց ոչ միայն զննանել, այլ և անցնել գլուխ այդ հիանալի շարժման:

Եւ Յունաստանի այդ յանդգնութիւնը կապառէ վերջապէս Արէտէին, մինչդեռ միւս կողմից վեց մեծ սնանկացած ասպետները, չը կարողանալով միմեանց հետ «համաձայնել» թիւրքիան իրանց մէջ զատելու համար, ջեզուխտաբար ձգնում են «համաձայնութիւն» կայացնել զրա բոլորովին հաւառակն անելու՝ թիւրքիայի «ամբողջութիւնը» պահպանելու: Վրանք նախամեծար են համարում շարունակ միմեանց հետ դժովել, ինչպէս կատաղած շներ, թիւրքիայի մի փոքրիկ իսկ պատառի համար: Բայց հէնց այն րօպէին, երբ խնդիրը գալիս է այնպէս, որ պէտք է թիւրքական հողերը բաժանել իրանց իսկական տէրերին՝ այնտեղ բնակող ստրուկ ժողովուրդներին, նրանք անմիջապէս «համաձայնութիւն» են կայացնում արգելելու այդ և անվախճան կերպով ձգձգում են թիւրքիայի հողեւարքի ժամը և նրա շղթայի տուկ հեծող ժողովուրդների ահռելի տանջանքները:

Բայց սակայն թւում է, որ այլ ևս անցան այդ ստոր, այդ տմարդի քաղաքականութեան օրերը: Այսօր այդ մեծ համաձայնութեան դէմ առ դէմ երևան գալու վրայ է մէկ ուրիշ համաձայնութիւն՝ այլ կերպ հզօր — ճշմարիտ համաձայնութիւն այն ստրուկ ժողովուրդների՝ ընդդէմ իրանց ընդհանուր դահլներին: Արէտէ, Ալբանիա, Թէսալիա, Մակեդոնիա, Հայաստան — այդ ամենքի ապագան էլ որոշ է. այսպէս կամ այնպէս,

նրանք պէտք է հասնեն իրանց փրկութեանը և միանալով եւրօպական միւս ժողովրդներին զերդաստանին, պէտք է վայելին իրանց մարդկային, իրանց քաղաքական իրաւունքները, մինչև որ կը հասնեն, նրանց հետ, ընդհանուր բարեկեցութեան...

Սուրբ «Համաձայնութիւնը» տրաքվելու վրայ է, իբրև սապօնէ զնդակ, Յունաստանի շարժման շնորհով:

Սուրբ Համաձայնութիւնը կազմված է ձնշըվածներին բոլորովին թաղելու և Մեծ Գահճապետին փրկելու համար:

Ճնշվածների համաձայնութիւնն ուղղակի դրա հակառակն է խոստանում:

Սուրբ Համաձայնութիւնն այլ ևս բաւական խմբի ձնշվածների արևելք և համբուրեց սուլթանական արևելայ ձեռքերը:

Բայէն հասել է, երբ այդ հեղեղանման արևելք կը խօսէ եւրօպական բոլոր ժողովրդներին սրբափառների ու փայփայած զգացումներին, և այդ ժամանակ դրանց մեծ կառավարութիւնները կը հասկանան վերջապէս, թէ ինչ բանի ծառայեց իրանց սուրբ Համաձայնութիւնը:

Պատրաստ լինեք մենք էլ, և սրտանց հրճովներ մեր եղբայր յոյների ու կրէտացիների մեծ գործերով ու յաղթանակներով:

Հեռու չէ օրը, երբ ձնշվածները կուշտ կը ծիծաղեն մազից կախված «սուրբ Համաձայնութեան» և թոկից կախված Մեծ Գահճապետի վրայ:

ԹՂԹԱՅՈՒԹԻՒՆ ԶԷՅԹՈՒՆԻՑ

25 Դեկտեմբեր, 1896.

Աշխատողները քաղաքիս և շրջակայ գիւղերու զրուծիւնը ըստ բաւականին բարեփոխած էր: Հինգվեց ամիսներու միջոցին տեղի ունեցած այնքան պատերազմներու, արիւնալից անարարաններու և անցուդարձերու յուզող տպաւորութիւնը հետզհետէ մոռացուելու, անհետանալու վրայ էր ժողովրդի մէջէն: Հայերուս և դրացի թիւրք ու չէրքէզ ազգաբնակչութեան մէջ եղած յարաբերութիւնները, որ խիստ կերպով լարուած և անհաշտ թշնամական բնաւորութիւն էր ստացած բանակցութեան պայմաններու ստորագրուելէ յետոյ, այժմ տակաւ առ տակաւ մեղմացած և նախկին սովորական վիճակն է առած:

Առևտուրն ու հաղորդակցութիւնը անարգել, կանոնաւոր կերպով կը կատարուէր այլ ևս Զէյթունի և մօտակայ քաղաքներու և գաւառներու մէջ: Զէյթունցիները և շրջակայ հայ գիւղացիները բոլորովին ազատ, իրենց անբաժան ու սիրական զէնքերով միասին, կը գնային Էլպիստան, Մարաշ, Կօկիսօն և ուրիշ կողմեր. նմանապէս թիւրքերն ու չէրքէզներն ալ կը գալին տեղա իրենց առևտուրն անելու և պէտքերը հոգալու համար: Թրքական կառավարութիւնը, որ բոլորովին անուանական էր քաղաքիս մէջ, կը ներկայացնէր միայն մի թիւրք պաշտօնեայ՝ փոխ-գալմազամ, և մէկ-երկու ոստիկաններ, մի կարևոր գեր չունէր: Ընդհանրա-

պէս, այդ փոխ-գալմազամը, Հալէպէն և Մարաշէն ստացած հրահանգներու համաձայն, ամեն ձիգ կը թափէր ու և նոր գէպք, կամ յուզում՝ չէ յարուցանել ժողովրդի մէջ և իր կողմէ պատճառ չը տալ խռովութիւններու: Իսկ ղեկավարները, որոնք կը գտնուէին զօրանոցի մէջ, շատ քիչ անգամ կիջնէին քաղաք. ղեկավարների հրամանատարն է տակաւին նախկին Ալի փաշան, որը մերթ խորամանկութեամբ և մերթ քաղաքավարի վարպետութեամբ կը ջանայ զէյթունցիներուս օյիներ խաղալ, երկպառակութիւն ձգել և այդպէսով վրէժ լուծել:

Այստեղ կը յիշենք Զէյթունի սոյն վերջին չորս հինգ ամսուայ միջոցին հայերուս, իսլամ ազգաբնակչութեան և կառավարութեան մէջ պատահած դէպքերը և անոնց յարաբերութիւնները:

Ապստամբութեան ատեն լեռնաձորերու և հովիտներու մէջ արածուող բազմաթիւ ոչխարներու և տաւարներու հօտերը, որոնք կը պատկանէին Զէյթունցիներուս և շրջակայ հայ գիւղացիներուն, օգտուելով խառնաշփոթ դրութենէն, թիւրքերն ու Կօկիսօնի չէրքէզները քշած տարած էին: Աւերջին ամիսներս թիւրքերը համարձակած էին այդ գողցուած անասունները բերել Զէյթուն և հրապարակի վրայ ծախել: Հայ գիւղացիները, ճանաչելով իրենց տաւարները, յետ պահանջցին կառավարութեան միջոցով, սակայն գալմազամը իրաւունք չը տուաւ այդ անել՝ առարկելով թէ, այդ ամենը տեղի ունեցած են պատերազմներու ժամանակ և պարտաւորուած ենք չը քրքրել այդպիսի հին խնդիրներ: Հայերը զայրացած, առանց կարեւորութիւն տալու գալմազամի խօսքերուն, իրենք բռնի կերպով յետ խնցին իրենց գողցուած կենդանիները, թիւրքերու չէրքէզներու ձեռքէն և տարին: Գալմազամը մի քանի ոստիկան ուղարկեց այդ անկարգութիւնները արգելելու համար, բայց մի քիչ յետոյ ոստիկանները ձեռնունայն վերադարձան:

Սուր վրայ գալմազամը սաստիկ բարկանալով կը կանչէր, թէ «մենք մեր աչքերով կը տեսնենք, որ դուք, հայերդ, զօրանոցէն թալանած այնքան ապրանքները բազարի մէջ բացարձակ կերպով կը ծախէք և ձեր ամենի տները լեցուն են իսլամի մալերով. մենք չենք պահանջած իսլամներու ապրանքները, մինչդեռ դուք հակառակը կը գործադրէք...»

Հայ աշուղները բազմաթիւ երգեր և թիւրքերէն տէսթաններ յօրինած են ապստամբութեան առթով: Ժողովուրդը տներու մէջ, հրապարակներու վրայ, շուկայի մէջ երգելով կը գովաբանէ խմբերու կամ անհատներու գիւցազնութիւնները, կոխներու մէջ քաջաբար ընկնող մարտիրոսներու քաջագործութիւնները, նշանաւոր դէպքեր: Տեղացի մի թիւրք անցած միջոցին կը լսէ այդ երգերու մի կտորը, որը գրուած էր Անդրէասեան Ասատուր աղայի մասին: Յիշեալ թիւրքը մասնաւոր թըշնամութիւն ունէր Ասատուր աղայի հետ և այս պատճառով կը բողբէ Գալմազամին՝ նաև զանազան սուտ զրպարտութիւններ անելով թէ՛ իբր յիշեալի տան մէջ պահուած կան բազմաթիւ մարմինի հրացան, ռազմամթերք, սուխներ ևն ևն: Այս միջոցները Ալի փաշան պատրուակ կը փնտռէր քաղաքի մէջ խուզարկութիւններ անելու և իր որոշած անձերը ձերբակալելու համար: Գալմազամը, Ալի փաշայի մասնաւոր հրահանգի համաձայն, հարիւրէն տեղի ղեկավարներով յանկարծակի կը պաշարէ Անդրէասեանի տունը՝ Կար-

կալար թաղի մէջ: Տնէն կը գտնուին 100-ի չափ փամփուշտ, մի քանի տուին, վառօթ և կապար: Խուզարկութիւնը վերջանալէ յետոյ Ասատուր աղան ալ միասին առած կը տանին զօրանոց, ուր կը պահեն: Ամբողջ քաղաքի մէջ շուտով կը տարածուի լուրը: ամենքը կը դրդուին կառավարութեան բռնած այս խաբերայ ընթացքի դէմ: Ըսողը զէնքերը առած կը հաւաքուի այդ թաղի մէջ և ամեն անկիւններէ աղմուկ, իրարանցում և գոռում-գոչում կը բարձրանան: Ասատուր աղայի եղբայրները խուզարկութեան պահուն քաղաքէն դուրս կը գտնուէին. երբ կը լսեն եղբուր թիւնը շուտով կը վերադառնան քաղաք և հաւաքելով իրենց թաղի կտրիճները՝ կը դիմեն Սուրէնեաններու թաղը: Այնտեղ ահագին աղմուկներով պահանջեցին Գայմագամին պահել իբրև դերի մինչև իրենց եղբոր վերադարձը, հակառակ պարագային, տեղի ունենալիք անխորժ հետեանքներու ծանր պատասխանատուութիւնը ձգեցին թուրք կառավարութեան կամ Ալի փաշայի վրայ, որը գիտակցաբար առիթ կը տայ և ուղղակի պատճառ կը գտնայ այդ բոլոր խռովութիւններուն: Սուրէնեան կարապետ աղան և մի քանիսը ամեն ջանք թափեցին համոզել ասոնց՝ այդպիսի մի քայլ չառնել: Սակայն սոյն դէպքը ոչ միայն կարկալարցիներու այլ նաև ամբողջ Զէյթունցիներու վրայ խիստ վատ տպաւորութիւն թողուց, այն զէյթունցիներուն, որոնք այնքան արիւն են թափել, բազմաթիւ զոհեր են տուել միմիայն իրենց ազատութեան, հանգստութեան և ապահովութեան համար: Յուզումն ու ժողովրդական զայրոյթը արդէն ընդհանրացած էր քաղաքի մէջ: Բազմաթիւ զինուած կտրիճներ նոյն օրը հաւաքուելով բարձրացան լեռները և սպառնալիքներով կառավարութենէն պահանջեցին շուտով բանտարկուածի ազատ տուն վերադառնալը:

Ալի փաշան տեսնելով այս ծանր անցուդարձերը, յուզումները, որոնք խաղաղութիւնը խանգարելու և իր դրութիւնը վտանգելու բնաւորութիւնը ունին, և երկիւղ կրելով, թէ հետզհետէ աւելի սուր կերպարանք կստանան և նորանոր վտանգներ կառաջանան, շուտով իր մօտ կը կանչէ մի քանի քահանաներ, աղաներ և բացատրութիւն կը խնդրէ անոնցմէ: Վերջիններս կը պատասխանեն, թէ մեր պայմաններն ու սուլթանի խոստումները այսպէս չէին. նախկին բռնութիւններն ու անարդար դէպքերը չը պիտի կրկնուէին. մենք պէտք է ազատ լինենք մեր զէնքերը կրել. զինուորներով մեր տները բռնի խուզարկել և ձերբակալութիւններ անել չը պիտի լինին. մենք խաղաղ, ազատ պէտք է լինենք և մեր պահանջները գործադրութիւն ունենան. հակառակ պարագային կը ստեղծուին և կը բազմանան սոյնանման դէպքեր, անբաւականութիւն, գուցէ աւելի ու աւելի ծանրացած և վտանգաւոր երևոյթ ստացած: Ալի փաշան տեսնելով, որ իր անխոհեմ գործունէութեան շնորհով նորանոր ցաւեր պիտի առաջ գան, կը զիջանի և, իբր թէ ներելով, Ասատուր աղան ազատ ձգեց և ուղարկեց իր տունը:

(կը շարունակուի)

ՀՐԴԵՀ.

ԽՆԴԱԿԱՆ Թ. ԳՐԱԳԻՐԱՐ

Ը. Գարահիսար. 26-7 Յունվար, 1897.

Այս բեր ամսոյ վերջերը Սեբաստիայէն քաղաքս

եկաւ տեղիս կառավարչի նորընտիր օգնական Նիքօլաքի անուն մի յոյն երիտասարդ: Այս օգնականի առաջին գործը եղաւ՝ կանչել մի քանի հայ երեւելիներ և յորդորել, որ հայերն ալ, առհասարակ, ինքնայօժար մասնակցին այն դրամական օգնութեան (իյանէ), որ սուլթանը մահմետական ժողովրդի համար պարտաւորիչ ըրած է. և ամեն ճիգ կը թափէ հայ վաճառականները համոզել, թէ ասով շատ լաւ բան ըրած և կառավարութեան ու սուլթանի հպակրանքը գրաւած պիտի ըլլաք: Հրաւիրեալներէն մին հայոց նիւթական տափնապն նկարագրելով և իրենց պահանջներն թուրք գիւղացիներու վրայ անգանձելի մնալն յիշելով՝ կուզէ այդ հարկէն զերենք և հայ ժողովուրդը ազատ կեցնել. սակայն օգնականը կը խոստանայ իրենց առնելիքներու գանձման մասին հարկ եղած կարգադրութիւններն ընել և պնդելով հրաւեր կը կարգայ հայոց՝ նպաստի խնդրոյն ուշադրութիւն դարձնել: Յետոյ, աւելի ևս առաջ գնալով, կառաջարկէ նոյն հայոց՝ խնդրագիր մը մատուցանել տեղական կառավարութեան, թէ հայ ժողովուրդը դարերէ ի վեր բարեգութ սուլթաններու շնորհներն և բարիքները վայելած է և այժմ կ'ուզէ յօժարակամ դրամական նպաստին մասնակցել: Այս նպատակաւ արդէն խմբագրել տրուած մի աղերսագիր ներկայացնելով, կը պահանջէ ստորագրել:

Ահա սուլթանական «բարենորոգումներու» գործադրիչ քրիստոնեայ մի պաշտօնեայ, որը կը ջանայ թուրք պաշտօնեայներու պակաս թողուցածն ալ ինք լրացնել... Մի քանի երկչոտ հայ մեծատուններ՝ Յարութիւն Պէյլէրեան, Խաչատուր Ղուկասեան, Պողոս Պէյլէրեան, Անտօն Քօթօթեան ևայլն, վերջապէս կը թուլանան և կը ստորագրեն խնդրագիրը հայ ժողովրդի կողմէ, առանց խղճմանք ընելու, թէ հայ ժողովուրդը, որ օրական հացը ծարելու համար մեծ նեղութիւն կը կրէ, պիտի կրնայ գոհացում տալ սուլթանի պահանջին, որ այդ հրէշ ոճրագործը չխղճաց այնքան անմեղ հայ արիւնները թափել և անոնց զաւակներն ու կիները թշուառ, անտէր, նօթի ու ծարաւ թողուլ: Մի քանի օրէն կը սպասուի կառավարութեան կողմանէ նոր առաջարկ՝ տրուած խնդրագրոյն համաձայն, հայոց մէջ նպաստներու հանգանակութեան ձեռնարկել. տեսնենք թէ՛ այդ խոստացող հայեր ի՞նչպիսի ջնդրութիւն պիտի գտնեն և ի՞նչպէս պիտի կարող լինեն բռնանալ հասարակ ժողովրդին վրայ, որուն մեծագոյն մասը իր օրական տուրքերն տալու անկարող կը գտնուի:

Գեկտ. 14-ին Սեբաստիայէն այստեղ ուղղուած մի հեռագրէ իմացուեցաւ, թէ անցեալ տարուայ թամբաբայի խնդրոյն առթիւ՝ խանութներու փակման և Մուավինի յայտնի սպաննութեան դէպքին առթիւ ամբաստանուած և գրեթէ 11 ամսէ ի վեր բանտարկուած հայ վաճառականներէ 7 անձեր, որք են. — Մ. Յակոբ Գարիպեան, որը դեռ նոր էր ազատուած մօտ երեք տարուայ յանդիման բանտարկութենէ, Անդրանիկ Պ. Վարդեան, Ս. Հիւսէյնեան, Ա. Թիւթիւնեան, Ս. Օղանեան, Գ. Պուրնազեան և Ա. Խոշորեան բոլորովին անպարտ արձակուած են, առանց մազի չափ յանցանք մը վրանին հաստատելու: Արդեօք չի՞ ամչնար այդ կառավարութիւնը որ, իբր փեսայար կամ ոճրագործ, շղթայով մեկզմէկու կապած, անլուր տանջանաց տակ, Սեբաստիա փոխադրեց և այնտեղ 11 ամիս բանտարկելէ վերջը անպարտ

կ'արձակէ: Ար կարծուի, թէ միւսնոյն օրը կուսակալէն տեղիս կառավարութեան ալ հաղարդուած է հեռագրով քաղաքական խնդրով բանտարկեալ հայերու համար սուլթանի ներման հրամանը. սակայն, կառավարութիւնը, 3 օր ծածկելէ յետոյ միայն ուղած է տարաձայնել թուրք ոստիկաններու մեջոցաւ՝ որոնք բանտարկելոց տունները վազելով աւետիս տալու փութացած և նուէրներ ընդունած են: Հաւանական էր թէ Պէյ-լէրեան Խաչիկի տունն ապաստանող 9 զինեալ հայերէն եօթն ևս, որք քաղաքիս բանտի մէջ կը գտնուին, կառավարութիւնն անմիջապէս ազատ պիտի թողուր զանոնք. սակայն որչափ զարմանալի է, երբ յայտնուեցաւ թէ կառավարութիւնն խնդրոյն տարբեր գոյն տալով, իբրեւ գող կամ բռնի ստակ կորցող, կ'ուզէ թողուլ բանտի մէջ, ասպատակներու քովերէն ելած յեղափոխական թղթերը, անոնց խոստովանութիւնները և այլ ապացոյցներ չեղեալ համարելով:

Նորընտիր Պատրիարք Օրմանեանէն տեղւոյս առաջնորդարանին ուղղեալ մի հեռագիր ևս կը ծանուցանէր՝ կայսերական ներուժն հայ բանտարկելոց համար, բաց ի կախաղանի վճիռ ընդունողներէ և կը հարցընէր, թէ քաղաքական յանցանք բանտարկեալ հայեր արձակուած են, թէ ոչ: Տեղւոյս հայերը նախապէս խոհեմութիւն համարեցին մէկ երկու օր սպասել և կառավարչին օգնականին հարցնել, թէ արդեօք պիտի գործադրեն սուլթանական ներման այդ հրամանը, թէ ոչ: Նա պատասխանած էր, թէ անպատճառ պիտի ազատուին բանտարկեալները և, միանգամայն, խորհուրդէր տուեր մի քանի օր ևս սպասել: Վերջապէս հայերը ստիպուած Պատրիարքարան հեռագրեցին իրողութիւնը. երբ օրէ ի վեր տակաւին պատասխան ընդունուած չէ Պատրիարքարանէն:

Այս օր տեղս հասան Սեբաստիոյ բանտէն արձակուող 6-7 ծանօթ հայ բանտարկեալները:

Վաղաքս բանտարկուած հայերէն ազատ արձակուեցան հետեւեալները՝ ներման հեռագրէն 11 օր յետոյ միայն, — Պուսէյիտ գիւղէն Ղուկաս Թուրթան, տեղացի Սարրաֆ Գասպար, Հիւսիսեան Նազարէթ, Խաչիկ Լէպլէպիճեան, Յարութիւն Պէյլէրեան, որոնք բանտ գրուած էին ասպատակներու ձերբակալման միջոցին, անոնց խնդրոյն հետ առնչութիւն ունենալով. նաև Բիւրք գիւղէն Մենծիկ և Ածպտերցի Աւագ, որոնցմէ առաջինը Ածպտերի միւտիր Էսաթի յայտնի խնդրով, երկրորդը՝ անցեալ տարւայ աւարառութեանց և սպանութեանց ատեն իբր լուր տանող-բերող, բանտարկուած էին: Ասոնք բանտէն հանելով՝ ուղղակի եկեղեցի տարած են գօմիսէրով, փօլիսով, ոստիկանապետով և բազմաթիւ ոստիկան զինւորներով միասին, ուրտեղ, քահանայի ներկայութեամբ, երգմանցուցած են՝ այսուհետեւ յեղափոխական գործերու չը ծառայել, սուլթանի հաւատարիմ հպատակը դառնալ են ևն... և յետոյ ազատ թողուցին:

Կառավարութիւնը անցեալ ամսոյ սկիզբը ձեռնարկած էր գրել հայ հեծեալ և հետիոտն ոստիկաններ որոց թիւը մինչև 30-ի պիտի հասնէր: Վերջերս կառավարութեան կողմանէ գործին աւելի ստիպողականութիւն տրուելով, ոստիկանաց թիւը լրացնելու համար, մինչև իսկ նախապէս մերժուածներն ալ ընդունուեցան: Ոստիկան հայերու թիւն այժմ կը հասնի գրէթէ 30-ի, որոնք, առհասարակ, աղքատ և տը-

գէտ մարդիկն են: Ասոնց մէջ թրքասէր մատնիչներ ալ պակաս չեն, ինչպէս Պէյլէրեան Մելքոն, որը ասպատակային խմբի տեղը թրքական կառավարութեան մատնելու ամենավատ դերն ունեցաւ: Այդ խմբի մատնիչներէն Յարութիւն Պէյլէրեան, որը Զմիւռնիա փախած էր ամիս մը յառաջ, այժմ տեղս վերադարձած է կառավարութեան պաշտպանութեան տակ:

ՆԱԽԵԱ ԿԻՆԻՍԵՅՑ

20ր-Մարդուան. 25 դեկտեմ. 1896.

Հարկահաւաք Գայմագամը շրջակայ հայ գիւղերէն կորզելով բաւական գումարներ, վերջերս անցաւ 20ր-Մարդուան, սակայն, նա այնտեղ չը կարողացաւ գործադրել այն խստութիւնները, գազանային արարքները, ինչ որ արաւ ուրիշ կողմեր. յաջողութիւն երբէք չունեցաւ. խիստ մեղմ և քաղաքավարի էր երբ ընթացքը: Անոր առաջին գործը եղաւ ներկայացնել մի հանրագիր, Գազանձեան եպիսկոպոսի կաթողիկոսութիւնը հաստատող, որը ուղարկուած էր Ատանայի նահանգական կառավարութեան կողմէ: Նա հրաւիրեց բոլոր քահանաները, յայտնի անձնաւորութիւնները և պահանջեց անպատճառ ստորագրել: 2ը նայած սուլթանի յիմար պաշտօնեայի ապաւնայիքներին և պոպոռոցներին, քահանաները հետեւելով ժողովրդի կամքին, խիստ կերպով մերժեցին:

Վերջին ամիսներս, հակառակ ցուրտին ու բուրբին, խուճը խուճը մուհաճիր թիւրքեր, չէրքէզներ, չէէններ, իրենց ընտանիքներով և անասուններով մէկտեղ զանազան գաւառներէ, մինչև Պրուսայէն և Գըլ-խաւորապէս, Զէյթունի շրջականերէն կը գան կը գաղթեն դէպի Գամասկոս և աւելի հեռի վայրեր: 77-78-ի Ռուս-թրքական պատերազմէն յետոյ թրքական կառավարութիւնը Բուլճիէն և Կովկասի լեռնականներէն հարիւր հազարաւոր ընտանիքներ բերելով բնակեցուց հայաշատ գաւառները, ինչպէս նաև Զէյթունի մօտերը, Կոկիսօն, Էլպիստան, Ուզուն Եայլա են ևն: Այժմ միւսնոյն մուհաճիրներն են, որոնք ամէն օր, լիքը կողբերով կը կոչեն, կը չուեն դէպի հարաւ: Երբ անոնց կը հարցուի իրենց այս գաղթականութեան պատճառը, անոնք կը պատասխանեն հառաչանքներով. «Երկիրը կեանքի ձեռք անցաւ... Կեանքիւնները յաղթեցին և սուլթանը չը կրցաւ անոնց միջնաս հասցնել...» Այս չէրքէզներու հոժ բաղմունքեամբ երկիրը և իրենց անշարժ հարստութիւնները թողած, յուսահատուած և լքուած գաղթելը՝ աստիկ ահ ու սարսափ է ազդեր տեղւոյս մահմետական խուճանի վրայ. վհատութիւնը այս առթիւ ընդհանուր է և բազմաթիւ թիւրքեր կը մտածեն լաւ վարուիլ քրիստոնեաների հետ:

Հիմա լուրերը գնալով պարզուեցան: Սուլթանը գթալով ժողովրդին՝ երկրի ամէն կողմերը «Բարենորոգումներ» կը ներմուծէ. նաև լուր կայ թէ ընդհանուր ներողութիւն պիտի շնորհէ հայ բանտարկեալներուն: Սուլթանը արդ սկսած է հայաշատ գաւառները քրիստոնեայ գայմագամներ կամ պաշտօնեաներ հաստատել: Այս եղանակներով անամօթ Համիտը կը ջանայ, ինչպէս մինչև այժմ ըրած է, դարձեալ խաբել հայերը և խաղացնել եւրոպական պետութիւն երբ. սակայն իրականութիւնը այն է, որ նա, սուլթան-

նը, միշտ այս ընթացքով ինքը իրեն խաբեց և տուժեց չարաչար: Այդ քրիստոնեայ նոր պաշտօնեաները՝ քրիստոնեայ անուան տակ ծածկուած տաճիկներ են, որոնք երկրի բարենորոգման և յառաջդիմութեան համար նոյնքան խորթ, վնասակար և վտանգաւոր են, ինչքան նախորդները. ասոնք աւելի ևս գրգռելու առիթ պէտք է դառնան հայ ժողովրդի վրէժխնդրութիւնն և արդար վայրոյթը:

ՆԻՁԱԿ.

ԱՐԱՐԳԻՐԻ ԱՆԼՈՒՐ ԿՈՏՈՐԱՅԸ

(Հարունակութիւն*)

Պիւցազնական սխրալի պատկերներ ալ կան Տ. Մկրտիչ քահանայի մօրուքը ածելէ վերջ՝ գլուխը կը ջախջախեն, իսկ երէց կինը, անօրէններու ձեռքը չանցնելու համար, ինքզինքը այրուող տան խաւովին մէջ նետեց: Տասնեակ կիներ թոյն խմելով անձնասպան եղան: Երկու սիրահար նշանածներ, ուրախուրախ ձեռք ձեռքի տուած, երգելով բոցերուն մէջ նետուեցան, յիշեցնել տալով Նաբուգոնոսորէն նետուած անվեհեր մանուկները... Աւելի հեռուն, հայ մը խլամուտեան դարձի հրաւերը ծաղրելով՝ երեսը կը խաչակնքէ և թաւ կուրծքը կը բանայ իրեն ուղղուած հրազեններու դէմ: Կառավարութեան շէնքին առջև ապաստանած, արկածեալ կիններ մանուկներ փոխառնելով լեցուած կը դողդողային. հաղարապետը սուսերամբիկ ղենուորաց շրջակով մը պաշարելով զանոնք, կրկնօր վրայ յաղթական, սիգապանծ, հայհոյանքներով ու նախատինքներով լի քարոզ մը կը կարգայ և կարտա-յայտէ բոլոր այն ցած, գձուձ, նողկալի զգացումները, որք մարդկութիւնը ետ ետ կը տանին միջև կիսավայրենի մարդակերներու շրջանը: Սուլթանի կայսրութիւնը ամենազօր և գթոտ, իսկ կեաւուրը՝ զազիր սողուն կը հուշակէր: Կըսէր. — զենքերնիդ յանձնեցէք, և թէ ոչ՝ հայութեան հատիկը պիտի ջնջուի երկրագնդէս...

Վերջապէս ահագին և սոսկալի դէպքերու մանրամասնութիւնը միառմի նկարագրել կարելի չըլլալով՝ կըսենք թէ՛ այս սարսափելի ջարդն ու հրդեհը տեւեց 15 օր, անընդհատաբար, գիշեր ու ցորեկ: Կառավարական արձանագրութեան տոմարի համաձայն՝ մեռելոց թիւը կը հասնի 2,000-ի: Արաբկիրի 2,000 հայ տղաներէն միայն 200ը կանգուն մնաց, անոնք ալ թաւնուած ու կիսաւեր վիճակի մէջ: 3 եկեղեցիներ և շատ մը դպրոցներ վառուեցան. իսկ Մայր-Եկեղեցին ու Առաջնորդարանը բոլորովին կողպատուած և կիսաբանդ, շուկան ծայրէ ծայր այրուած մէջտեղի մզկիթով մէկտեղ: Կոտորածը և սարսափը, ինչպէս ըսինք՝ 15 օր տեւեց, և այն միջոցին, երբ Բարձր. Դուռը ամեն կողմ պաշտօնական ղեկուցումներով կը յայտարարէր՝ թէ Անատոլի մէջ ծագած խռովութիւնները դադրած և, շնորհիւ սուլթանի համբաւի, ապահովութիւնը վերահաստատուել է, այստեղ և հայկական գաւառներու հեռաւոր անկիւնները անզէն հայերը կը խողխողէին և ամբողջ գիւղեր ու քաղաքներ հրոյ ճարակ կը դառնային: Դէպքէն շատ վերջ ոստիկանական հսկողութեան տակ բանտարկեալներուն թաղել կը տային փողոցներու մէջ ձգուած դիակները, և անոնցմէ շատե-

րն ալ կը սպաննուին: Մի ծանր և սրտագրաւ դէպք. — Գէնտիկեան Սարգիս, դիակներու բազմութեան մէջ իր երկու յաղթանդամ եղբայրներու դիակները կը ճանաչէ և մի սրտաբուխ դառն հառաչը զսպելու անկարող կը լինի: Վշտալի հառաչանքը դուրս կը թռի կրծքէն և իսկոյն մօտէն Մանչէսթրի մահացու գնդակը կը մտնի սրտին... Երիտասարդը անկենդան կիշայ երկու եղբարց դիակներու մէջտեղը... Վայրենի մի ոստիկան էր, որ անզուսպ ցաւի արտայայտութիւն մը կը խեղդէր քարացած խղճմտանքով: Իր ոստիկան ընկերը կըսէ՝ թէ այդ գործը նիզամէն չէր. իսկ ոճրագործը հայհոյանքով պաաստխանեց թէ՛ չէ՞ որ այժմ ամեն թուրք մէկ մէկ նիզամ և մէկ մէկ սուլթան է:

Տասն և հինգ օր յետոյ միայն կոտորածն ու հրդեհը դադարեցնելու շնորհն ըրաւ կայսերական բարեգութ կառավարութիւնը, բայց, այնուհետեւ փողոցէ փողոց, տունէ տուն ողջ մնացած հայեր կը փնտռէին բանտարկելու համար: 15 տարեկանէ վեր և 60 տարեկանէ վար որու հանդիպելու լինէին կը բանտարկէին: Այս կերպով 4-500 հայեր լեցուցին Արաբկիրի բանտը: Բանտը գետնափոր մի նկուղ է, մուծ, խոնաւ, անձուկ, ուր հազիւ 30 մարդ կարող է պասպարուիլ իրարու վրայ խոնուած. այժմ կարելի է երևակայել, թէ ինչպիսի անհասնելի կացութիւն էր վիճակուած մեր թշուառ բանտարկեալներուն: Ըսպառնալիքի և զանազան տեսակ բռնութեանց տակ ըստորագրութիւններ կը հաւաքէին կարգ մը բանտարկեալներու կողմէ, որպէս թէ Արաբկիրի աւերման ու կոտորածի պատճառ ու առիթ տուողը հայերն են եղած և կառավարութիւնը ջանացել է արգիլել կամ թեթեւացնել այդ դէպքերը. ևն ևն: Այսչափ մարդիկ անօթի, խեղճ, մերկ կապսեմ այս անտանելի բանտին մէջ երկար ամիսներով: Խեղճերուն զաւակները, կիները առաւօտէ մինչև երեկոյ՝ փլատակ տներու ներքէն այրուած ցորեն կը հանեն իրենց այրերուն կամ հայրերուն ուտելիք հայթայթելու համար: Վերջին ժամանակները նահանգաբարձները հարցաքննիչ պաշտօնեայ գալով՝ բանտարկեալներուն մեծ մասը արձակեց և միւսները, 105 հոգի, իբրեւ յանցաւոր և խռովարարներ ամբաստանելով՝ Խարբերդի բանտը փոխադրեց: Ասոնց թշուառութիւնը աննկարագրելի է և դատավարութեան տակ են:

Արաբկիրի ներկայ վիճակը, ընդհանրապէս, ողբալի է. նամանաւանդ նիւթապէս բոլորովին չուառ ու չքաւոր: Փոխանցիկ հիւանդութիւններ կը ճարակին. նորանոր վտանգներ անպակաս են միշտ:

ԿՐԵՏԷ

ԵՐԹՈՎԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԻՑ

— Փետրվ. 5 ին Կանէա կրակների մէջ է. հրդեհը՝ մահմետականների ձեռքով վառուած լաւում է քրիստոնէից թաղերը. երկու կողմից էլ հրացանաձգութիւնը տեղում է կարկուտի նման: Սպանեալներու թիւը յայտնի չէ: — Փետրվ. 6 ին հազիւ մի քիչ հանդարտած է հրդեհը և քաղաքը. և ահա վերստին քանդվում են երկուսն էլ: Քրիստոնեաները ահագին բազմութեամբ պատերազմական նաւերն են. ապաստանում՝ դէպի Շիրա, Միլո և Աթենք գնալու համար: Իսկ Հալէպայի առջև, դէմ առ դէմ կանգնած, են

*) Տես «Հնչում» 1897, № 1.

մէկ կողմից 700 զինված Վրէտացիներ, միւս կողմից նորնչափ մահամետականներ, որոնց հետոհետե օգնու-
թեան են հասնում Վանէայից, և այլ զինուորական իշխա-
նութիւնների կողմից զինված նորանոր խումբեր: Զունաս-
տանի մէջ ժողովուրդային յուզումը իր գագաթնակէտը
հասած է. ամեն կողմ միթիւններ են տեղի ունենում
և հազարաւոր հեռադիւններ են տեղացնում Աթէնք,
իրանց գահունակութիւնը յայտնելու համար Վառապա-
րութեան, որ վերջապէս որոշել է, նայն իսկ Թագա-
ւորի նախաձեռնութեամբ, գործօն և վճռողական մի
դեր ստանձնել Վրէտական հարցի մէջ: — Փետրվ. 7 և
8 ին Վանէայի մէջ, այլ ևս, բրիտանական չարութեամբ
առն չէ մնացած և ոչ էլ սպանելի քրիստոնեայ.
քաղաքը ամբողջովին թրքական է՝ զինուորական հրա-
ւանատարի իշխանութեան ներքեւ, մինչդեռ Բէրօվիչ
փաշան բանտարկուած է իւր կառավարչական պալատի
մէջ: Քաղաքին շուրջը կռիւր շարունակվում է և
Վրէտացիք յունական դրօշն են պարզած: Հալէպայի մէջ
էլ հաւաքուած խումբ մը պատգամաւորներ և ապս-
տամբապետներ, Վրէտէի՝ Զունաստանի հետ միացումը
յայտարարելով, հրաւիրում են Վերոգ թագաւորին
գալ և գրաւել կղզին. իսկ Զունաստան իր ամբողջ
զորութիւնը պատրաստութեան մէջ է գնում կրէտո-
կան ջրերը գնալու համար: — Փետրվ. 10 ին կռիւներ
վերսկսան կղզուն զանազան կողմերը: Ռախիութեան մե-
ծամեծ ցոյցերով Պիրէոնից գէպի Վրէտէ են ուղե-
որվում յունական ութ առաջնակարգ տորպիւնաւեր
և մի յաճախորդ՝ Վերոգ իշխանի հրամանատարու-
թեան ներքեւ: — Փետրվ. 11 ին Վրէտացի ապստամբ-
ները Ապօկորոնա են հրաւիրվում՝ առժամանակեայ մի
կառավարութիւն հաստատելու համար, որ պիտի վարէ
կղզու գործերը, մինչև թրքական լուծի թօթափումը և
Վրէտէի վերջնական միացումը Զունաստանի հետ: Գի-
սամօ Վաստելէսի մէջ ընդհարում, 30 քրիստոնեայ և
100 մահամետականներ կան սպաննուած: Զունական
կառավարութիւնը չորս նոր տորպիւնաւեր ևս շոգիի
տակ պահած է Վրէտէ ուղարկելու համար, իսկ խումբ
խումբ զօրաբաժիններ, ամենայն ածապարանօք դէպի
սահմանագլուխ են ուղարկվում, որոնց հանդէպ, օս-
մանեան կառավարութիւնն էլ կանխապէս Տիսսալիայի
սահմանագլուխը ուղարկած 12 զօրաբաժնի վրայ՝ Պոլ-
սից 10 զօրաբաժին ևս ուղարկելու պատրաստութիւն-
ներ է տեսնում: Պ. Գիմիտրօֆ, Աթէնքի բուլգարա-
կան գործակալը, մօտեւոր միտիայով, բանակցիլ ըս-
կած է Յոյն կառավարութեան հետ: Երեւի առաջի-
կայ գարնան, ամբողջ Տաճկաստանում ապստամբու-
թիւններ կը ծագեն, և արդէն լուր է պտըտվում, թէ
խռովութիւններ ծագած են Ալբանիայում, որտեղէն ու-
ղում են դուրս վոնտել թուրքերին: — Փետրվ. 12-
ին Հէրակլիոնի և Ռէտիմօյի քրիստոնեաների մի մասը
կարողացաւ քաղաքներից դուրս գալ. իսկ Վանէայի
շուրջը հաւաքված՝ չորս հազար ապստամբներ, ռաշ-
մավթերի և նոր օլթերի են սպասում քաղաքի վրայ
յարձակում գործելու համար: Գերոգ իշխանի հրամա-
նատրութեան տակ յունական տորպիւնաւերի խումբը
Վրէտէ հասած է և լուր կայ թէ գիշերով ցամաք է հա-
նել մեծաքանակ զէնք, ռազմավթեր և ութսուն թն-
դանթաձիգ զինւորներ՝ մի քանի թնդանթներով: —
Փետրվ. 13-ին ջարդերը շարունակվում են ամեն կողմ.
ի Սիտիա միայն սպաննված են 300 մահամետական. այս
և նմանօրինակ լուրեր ելլողը կատաղեցրել է. ամ-

բողջ Վայսրութեան մէջ ընդհանուր ջարդի վախը կայ:
Պոլսոյ Գիսպաններն իրանց չառաքարութիւններին
յանձնարարում են Վանէա, Ռէտիմօ և Վանտիա,
մահամետականներին պաշտպանելու համար: Պիրէոնից
դէպի Վրէտէ ճամբայ ելան յունական երեք նաւեր,
որոնց մէջ գտնվում են մէկ բանակ հետիոտն, մէկ
զօրաբաժին տապարակիր և մէկ բատախէրա թնդանթ:
Զունական կառավարութիւնը դրօշն տակ է կոչել
1893-ի և 94-ի պահեստի զօրքերն: Ածապարանօք
ձիեր և ջորիներ են գնում խալիպից և Պոնէշեա
խալիպան քաղաքի մի գործարանից մեծաքանակ զէնք
և փամփուշտ: — Փետրվ. 14 ին Հալէպայի շուրջը
կռիւր շարունակվում է, նոյպէս և Վանէայի ռախիո-
ծումը՝ երկու կողմից:

— Յրանսա, օսմանեան Պետութեան ամբողջու-
թիւնը վտանգված համարելով, եթէ թոյլ տրուի որ
Վրէտէ միանայ Զունաստանի հետ, մեծ մահահոգութեան
մէջ է, և իւր յենակէտ՝ Ռուսիային, շատ ամուր և
վատահերի չը գտնելով, Արեւելեան շահերի տեսակէ-
տից, „Figaro“-ի — նման կիսապաշտօնական մի թեր-
թի բերանով, Եգիպտոսի վրայ ունեցած՝ իր իրաւունք-
ներից ձեռնիմափ լինելն է հուշակում, ջանալով Անգ-
լիային շահել, կամ յամենայն դէպս Վրէտական հար-
ցը, այսպէս կամ այնպէս, Արեւելեան հարցից զատել
և փրկել Տաճկաստանը վերջնական պատառումից, որի
համար ինքն իրան դեռ պատրաստ չէ գտնում և կը
վախնայ հացկերոյթից անմասն մնալ: Տուլօնից մի բա-
նի մարտանաւեր ճամբայ ելած են դէպի Վրէտէի ջը-
րերը:

— Ռուսիա, փետրվ. 5-ից սկսեալ, Օտէսայի և
Սեւաստապոլի բանակները պատրաստութեան մէջ է
գնում ամենամեծ ածապարանօք: Օտէսայի նաւահան-
գաստի մէջ այժմ ներկայ են և շոգիի վրայ կանա-
ւոր կոչված տորպիդից վեց նաւ: Կոյն պատրաստ վի-
ճակի մէջ է նաև Սև ծովու պատերազմական նա-
ւատորմիղը Սեւաստապոլում, և սպասվում կիւղի զինու-
որական նահանգից գալիք բանակներուն: Այս պատրաս-
տութիւնների հանդէպ, ինչպէս նաև Ռուսական քա-
ղաքական լեզուի մի կարգ պարբերութիւններից, նկա-
տելի եղած է ոմանց, թէ Ռուսիա մտադիր է, յան-
կարծակի էջք մը ընել Բօսֆօրի վրայ և ներքը գնել
թրքական հարցը իւր իսկ միջնաբերդի մէջ: Մի քանի
պատերազմական նաւեր է ուղարկած Վրէտական ջրերը,
և ընդհանրապէս լուր ընթացք է պահում Զունաս-
տանի վճռական քայլերի հանդէպ:

— Վերմանիա իւր մի կրքնադիէր զինւորի իսկ
ոսկորները խնայելու քաղաքականութեան դերի մէջն է
միշտ, և ամենայն սինկլութեամբ յայտարարում է, որ
նոյն իսկ հաղարաւոր զոհերի (անշուշտ ոչ կրքնադէր)
հանդէպ, Տաճկաստանի statu quo-ն պահպանելու
կողմն է: Այսու ամենայնիւ աւելի նպատաւոր է երև-
ում Ռուսիայի քաղաքականութեան, քան ուրիշի, քա-
նի որ սրա շահերը բոլորովին չեն հակասում իւր
գաշնակից՝ Աւստրիայի շահերին:

— Աւստրիա, նոյն statu quo-ի համար ամեն զո-
հողութիւն անելու պատրաստ էր թուում, իսկ առ այժմ
տատանեալ վիճակի մէջ է: Խոստովանում է, որ այլ
ևս Եւրօպական համաձայնութիւնը Զունաստանի ձեռ-
քին է, և մէկ կողմից, Սելանիկը գրաւելու միտքը
որոճալով, շատ էլ դժգոհ չէ երևում, որ Զունաս-
տանն էլ Վրէտէն գրաւէր. բայց և այնպէս, հակա-

ուակ պարագան էլ աչքն առաջ ունենալով, մի քանի մարտանաւեր կուզարկէ. կրէտական ջրերը:

Այլ երջին վայրկեանին փետրվ. 16-ին հասած լուրերի համաձայն, Կանեա գրաւված է եւրոպական Պետութիւնների համաձայնութեամբ, և Աւստրիայի ու Բրիտանիայի նախաձեռնութեամբ: Քաղաքը մտել են, խաղաղական մի զօրապետի հրամանատարութեան տակ, հարիւրական նաւաստիներ ուսական, Փրանսիական, խաղաղական, բրիտանական մարտանաւերից, և 50 նաւաստիներ աւստրիական մարտանաւերից: Կոյն թուով նաւաստիներ էլ պատրաստ են նաւերում, ի պահանջել հարկին, Փրանսիական մի զօրապետի հրամանատարութեամբ ցամաք ելնելու համար: Զուեական մարտանաւերից էլ բաւականաչափ զօրք ցամաք ելած է, սակայն եւրոպական Պետութիւնների արգելքի վրայ անշարժ է մնացել: Լուր է պտտում, թէ այս առժամանակեայ գրաւման պիտի յաջորդէ զուտ իտալական մի գրաւում, համաձայնութեամբ Պետութիւնների, մինչև որ խաղաղութիւնը վերահաստատվէ կղզու վրայ, որից յետոյ կամ Կրէտէն վերջնականապէս պիտի միացնեն Զուեաստանին, կամ աւելի հաւանականութեամբ, այն Բուլղարիայի նման մէկ Իշխանութիւն պիտի հռչակեն:

«ՀՆՉԱՎԻ» ԴԱՏԸ.

ՄԵՏՆՁԵՆԱՌՈՐ ԱՐԳԵԼՈՒՄՆԻ
ԱԼՖԱՐԻԱ — ԱՐՓԻԱՐԱԿԱՆՆԵՐԻՆ ՋՐԱՏԱՐԱԿԵԼ
«ՀՆՉԱՎ» ԱՆՈՒՆՈՎ ԹԵՐԹ

Ինչպէս յայտնի է, անցեալ տարի Գիւնեմբերի 4-ին Լոնդոնի Արդարութեան Բարձրագոյն Chancery Բաժնում կայացվեց վճիռը «Հնչակի» դատի նկատմամբ, որ Մ. Սըվազեան անունով անձը իր ընկերներով բաժնէ կին ընդդէմ Ա. Նազարբէկի: Այդ վճիռը տրվելով, լիովին կերպով, ինչպստ Նազարբէկի, «ցնոր տնօրէնութիւն» դատարանի, ներկայ ամսի 13-ին նոյն Դատարար Մր. Զըստիս Նորթի կողմից միանգամից ընդ միշտ նոյն վճիռը հաստատվեցաւ ՄԵՏՆՁԵՆԱՌՈՐ ԿԵՐՊՈՎ, այսինքն մշտնջենաւոր կերպով արգիլվեցաւ Նազարբէկի հակառակորդներին, Սըվազեին և ընկերներին, կամ յընդհանրապէս զրանց ծառայողներին, գործակալներին կամ վարձկաններին տրպագրել, հրատարակել, ծախել, վաճառքի դնել կամ շրջաբերութեան հանել որ և է պարբերական թերթ կամ գրութիւն «Հնչակ» անուն կամ տիտղոսի տակ և կամ շարայարական թւի կարգով (numéro de série) — այնքան նման պահանջողի (Նազարբէկի) «Հնչակ» թերթին, որ կարծեցնել տայ, թէ այս-ինչ թերթը պահանջողի թերթն է, որը սա հրատարակում է վերոյիշեալ տիտղոսի տակ, և կամ այն-ինչ թերթը շարունակութիւնն է պահանջողի թերթի: «

«Times» թերթն այդ տեղեկութիւնը հաղորդելով՝ գրում է. «Դա մի հակադատութիւն էր Սըվազլիի և միւսների կողմից ընդդէմ Նազարբէկի. Սըվազլիի իր իրաւունքն էր համարում գործածել «Հնչակ» անունը և արգիլել Նազարբէկին նոյն անունը գործածելու: Դատարարը վճիռ կայացրեց ընդդէմ Սըվազլիի, մինչև ցնոր քննութիւն (այստեղ «Times» ի մէջ գրւած է Դատարարի վճիռը) ... Դատարարը որոշեց, որ «Հնչակը» Նազարբէկի հրատարակութիւնն է: Այդ դատն երէկ առաջ եկաւ և քննվեցաւ ... Դատարարն ի նը-

պաստ Նազարբէկի հաստատեց իր վճիռը, մշտնջենաւոր կերպով արգելք դնելով Սըվազլիին «Հնչակ» անուն հրատարակութիւն հանելու:

ԿՈՆԴԱԿ — ԿԵՂՏ

Պատրիարք Օրմանեան իր դերը լաւ է կատարում: Սուլթանն անիրաւ կը լինի երախտապարտ չը լինելու նրա ծառայական գործերի համար: Այդ Օյինքալը — մեր խօսքը պատրիարքի մասին է — վերցրել եւ ինչ-որ Կոնդակ է թխել, որի մէջ մի շարք սքոլաստիկական փքուն ծոռոմաբանութիւններից յետոյ — զուրկ ամեն իմաստից — նա խոշոր-խոշոր գովեստներ է շրջալայում սուլթանի «բարեգթութեան, հայրամիտութեան, բարձր հովանաւորութեան, իմաստութեան, սիրոյ» եւ այլն մասին, զիտէք որի նկատմամբ — չայ ժողովրդի նկատմամբ, որի Դահիժն է սուլթանը: Եւ Մեծ Մարդասպանի այդ «բարեմամութիւնները» թւեալց յետոյ՝ փոքրոգի վեղարաւորը շեքմ հրաւէր է կարդում հայութեանը «հաւատարիմ, հնազանդ ու սիրող» լինել ... սուլթանին եւ ի վերջոյ շեքմ աղօթք է պատուիրում անել սուլթանի «արեւաշատութեան համար» ... Այդ ստորաքաղաք կեղտը Կոնդակ անունով, նա այն կարգացնել է տալիս եկեղեցիներում այն հայ ժողովրդին, որի ծնողները, կիները, զաւակներն ու ազգականները խողխողվել ու խողխողվում են նոյն սուլթանի կողմից ... Այդ անամօթ թղթի կտորը պատրիարքը յանդգնութիւն ունեցաւ ուղարկելու նաեւ եւրոպական զաղթականութիւններին ... Վառնայում եւ մի քանի այլ քաղաքներում ժողովուրդն արգիւնց կարդաւ այդ կոնդակը. իսկ Լոնդոնում, ուր եկած էր Մանչեստրի հայոց «հոգեւոր հայրը»՝ պատարագ մատուցանելու՝ եւ կոնդակը կարդալու — պատրիարքը ստացաւ մի հնչին ապտակ: Երբ այն «հոգեւոր հայրը» յայտնեց, որ պէտք է կարդայ կոնդակը, ժողովրդի մէջ բարձրացաւ խիստ բողբու մի Հնչակեան մտնեալով ամբիօնին քաշեց ու առաւ կոնդակը, որ ծմբեւել ու պատռեւել, յայտարարեց, թէ հայոց եկեղեցին մէկիմ չէ եւ հայ ժողովուրդն էլ անարգանքի ու ստորութեան ստարկայ չէ կարող լինել ազատ Լոնդոնում: Միեւնոյն ժամանակ ներկայ Հնչակեաններն արգիւնցին Օրմանեանի անուան յիշատակութիւնը պատարագի մէջ:

Կուսակցութեանս Գանձարանում շնորհակալութեամբ ստացվել են հետեւեալ գումարները. —
ԲԵԼԳԻԱ. Գ. քաղաքից Մ. -ից մէկ անգլ. ոսկի:
Թ. քաղաքից վ. Մ. -ից 10 Ֆր.
ԲՕԼԳԱՐԻԱ. Բուրգասի Հնչակեան մասնաճիւղից 6 գաղ. ոսկի:
ԲՕԼԳԱՐԻԱ. Յաւելված Ռուսճուկի Հնչակեան Մասնաճիւղի գանձարանը հասած նպաստների նախորդ ցուցակի. — Ն. Ս. 100 Ֆրանկ. Ոմս. Ս. եւ Յ. Գ. 60-ական Ֆր. (120 Ֆր.) Կ. Ա. Բ. Գ. եւ եղ. Թ. 50-ական Ֆր. (100 Ֆր.). Ոմս 2. եւ Ոմս 40-ան Ֆր. (80 Ֆր.). Գ. Գ. 30 Ֆր. Ն. Բ., Ժ. Դ., Ժ. Բ., Ոմս Գ., Մէկը. Զ. Կ. եւ Ոմս 20-ական Ֆր. (140 Ֆր.). Գ. Ն. 24 Ֆր. Ոմս Թ., Մ. Գ., Ոմս., 2. 2. 10-ան Ֆր. (40 Ֆր.). Ոմս 5 Ֆր. Հաւաքում 11 Ֆր. ... Մի խումբ պանդուխտներից 136 Ֆրանկ: Ոմս մէկ ատրճանակ փամփուշտներով:

«ԱՊՏԱԿ»

ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
(ԽԻԱՄՍԵԱՅ)

Լոյս տեսաւ «Ապտակի» երրորդ տարւայ թիւ 9, Յունկարի համարը: Նկար. — Որսորդութիւն:
«Ապտակի» այդ համարի ըզմանդակութիւնն է. — Հին առակ. — Կոտորոծի ժամանակ (ոտամաւոր, Խենթը). — Ուրիշների մտքեր. — «Ապտակի» հանելուկներ. քէպուս թիւ 10. — Թիւ 9 քէպուսի լուսումը:
«Ապտակի» տարեկան բաժանորդագինն է 5 Ֆրանկ:

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և դրամ ու մանդատ ուղարկել հետեւեալ հասցեով. —
M. Beniard. — 22, Ormiston Road, Shepherd's Bush. London W. [Angleterre].